Հանդիպում ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար
Դավիթ Հարությունյանի հետ

Մարտի 18, 2016 | Համաշխարհային բանկ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
(նախագիծ)

Հանդիպմանը ներկա էին.

- **Հարություն Մովսիսյան** | ԵՊՀ Կայուն զարգացման կենտրոն
- **Արթուր Գրիգորյան** | Էկոիրավունք ՀԿ
- **Էրիկ Գրիգորյան** | ԲԻՏԵԱ ՀԿ
- **Ալեն Ամիրխանյան** | Հայաստանի ամերիկյան համալսարան, Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն
- **Բաբկեն Հարությունյան** | Civil Voice ՀԿ
- **Սոնա Այվազյան** | Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
- **Ինգա Զառաֆյան** | Էկոլուր ՀԿ
- **Վալենտինա Գևորգյան** | Հայաստանի ամերիկյան համալսարան, Թուրփանջյան հասարակական հետազոտությունների կենտրոն

Քննարկվեցին հետևյալ հարցերը:

- **Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում** ծրագրի շրջանակներում ՀՀ կառավարության հայտարարությամբ հրավիրված փորձագետների ընտրություն, և
- ԱՃԹՆ Բազմաշահագրգիռ կողմերի խմբում որոշումների կայացման մեխանիզմ:

Փորձագետների մասով՝ Դավիթ Հարությունյանը հստակ արձանագրեց, որ նրանք լինելու են կառավարության կողմից նշանակված անձիք, ովքեր պատասխանատու են լինելու կառավարության առջև: ԲՇԽ-ում նրանք ընդամենն աջակցող գործառույթ են ունենալու, իսկ նրանց եզրակացություններն ու դիրքորոշումները կարող են ԲՇԽ-ի աշխատանքներում ներառվել միայն ԲՇԽ-ի կողմից դրանք ընդունվելու դեպքում:

Նշվեց նաև, որ այդ փորձագետները չեն փոխարինելու տեղական ԱՃԹՆ Քարտուղարությանը և չեն կատարելու նրանց գործառույթները: Այսպիսով, նշված փորձագետները ԲՇԽ-ում ունենալու են բացառապես խորհրդատվական դերակատարում և հանդիսանալու են կառավարության կողմից ֆինանսավորվող աշխատողներ:

Առաջին հարցի վերաբերյալ կողմերը համաձայնվեցին, որ քաղաքացիական հասարակության, հանքարդյունաբերական ընկերությունների և ՀՀ կառավարությունից 2-ական ներկայացուցիչ (Ալեն Ամիրխանյան և Հարություն Մովսիսյան) կընդգրկվի փորձագետների ընտրության հանձնաժողովում:

Երկրորդ հարցի կապակցությամբ՝ կառավարությունն ըստ էության առարկեց, որ մեր կողմից ներկայացված երեք խումբ որոշումները կայացվեն կոնսենսուսով հիմնավորելով, որ հենց դրանք են կազմում առանցքային նշանակության հարցերը: Առաջարկվեց մի մոդել, ըստ որի՝ կոնսենսուսի չգալու պարագայում անկախ միջնորդի աջակցությամբ (mediator) իրականացվեն բանակցություններ՝ կոնկրետ հարցի շուրջ համաձայնության գալու համար, որը կարող է տևել առավելագույնը մեկ ամիս: Համաձայնության չգալու պարագայում հարցը լուծվի քվեարկությամբ: Քվեարկության արդյունքները կհամարվեն ընդունելի, եթե ամեն խմբից կողմ լինի առնվազն երկու հոգի և միաժամանակ ընդհանուր ձայների կեսից ավելին:

Այս մեխանիզմի վերջին՝ քվեարկությանն առնչվող կետը քաղ.հասարակոթյան որոշ ներկայացուցիչների կողմից առարկության արժանացավ այն հիմնավորմամբ, որ եթե որևէ հարցի շուրջ կարող է ծագել այդքան մեծ սկզբունքային անհամաձայնություն, ապա քվեարկության միջոցով հարցի լուծումը կարող է հանգեցնել այլընտրանքային խմբերի ձևավորման, որոնք չեն ճանաչի ԲԾԽ-ի լեգիտիմությունը, և այդ խմբերին կարող են միանալ նաև ԲԾԽ հանրային հատվածի այն անդամներըը, որոնք սկզբունքորեն դեմ են արտահայտվել տվյալ որոշմանը: